ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Աննա Արամի Այվազյանի «Կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բանկերի կորպորատիվ կառավարումը տնտեսագիտական հետազոտությունների այն ուղղություններից է, որը նշանակություն ունի ոչ միայն առանձին ֆինանսական կազմակերպության արդյունավետության գնահատման համար, այլև իր հետքը կարող է թողնել նաև ֆինանսական համակարգի կայունության մասին պատկերացում կազմելու վրա: Բանկում կառավարման սխալ որոշումների հետևանքները կարող են տարածվել բաժնետերերի շրջանակից դուրս՝ անդրադառնալով ավանդատուների, վարկառուների, ներդրողների և ընդհանուր առմամբ ֆինանսական համակարգի վրա: Հետևաբար, կառավարման մարմինների պատասխանատվության, վերահսկողության և հաշվետվողականության իրական արդյունավետության գնահատումը ունի ակնհայտ տնտեսական նշանակություն:

Թեմայի արդիականությունն առավել է ընդգծվում վերջին տարիներին՝ թվային փոխակերպման արագացման, բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման սկզբունքների տարածման, թվային հանցագործությունների ռիսկի և գործառնական ռիսկերի աճի պայմաններում: Այս զարգացումները պահանջում են, որ բանկերի կառավարման մարմինները ոչ միայն ապահովեն նորմատիվ համապատասխանություն, այլև իրական ռազմավարական դերակատարում ունենան ռիսկերի և կայունության օրակարգի կառավարման հարցերում:

ՀՀ բանկային համակարգի դեպքում խնդիրը լրացուցիչ հետաքրքրություն է ներկայացնում կարգավորողի մեծ դերակատարության, սեփականության կառուցվածքի առանձնահատկությունների և շուկայական վերահսկողության համեմատաբար սահմանափակ մեխանիզմների պատճառով: Սա հաշվի առնելով

կարևոր է գնահատել, թե որքանով է ձևական իրավական համապատասխանությունը վերածվում կառավարման իրական արդյունավետության և որքանով են տնօրենների խորհուրդները, վերահսկողական մեխանիզմները և թվային կառավարման գործիքները նպաստում բանկերի ռազմավարական կայունությանը:

Այս տեսանկյունից ընտրված թեման արդիական է, իսկ հետազոտության ուղղվածությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ՀՀ առևտրային բանկերի կորպորատիվ կառավարման արդյունավետության չափմանը և դրա բարձրացման հնարավորությունների բացահայտման համար:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Հեղինակը նպատակադրել է ոչ միայն նկարագրել ՀՀ բանկերում գործող կորպորատիվ կառավարման համակարգը, այլև գնահատել դրա փաստացի արդյունավետությունը, բացահայտել զարգացմանը խոչընդոտող գործոնները և առաջարկել կատարելագործման գործիքներ: Այդ նպատակը հետազոտությունում իրացվում է փոխկապակցված մի քանի ուղղություններով:

- Ուսումնասիրել կորպորատիվ կառավարման տեսական հիմքերը, էվոլյուցիան և ժամանակակից հայեցակարգերը՝ առանձնացնելով բանկային ոլորտի կառավարման առանձնահատկությունները:
- Վերլուծել կորպորատիվ կառավարման ժամանակակից միջազգային փորձը և գնահատել դրա կիրառելիությունը ՀՀ բանկային համակարգում:
- Ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում կորպորատիվ կառավարման իրավական, կարգավորող և ինստիտուցիոնալ միջավայրը և գնահատել դրա համապատասխանությունը միջազգային սկզբունքներին:
- Իրականացնել ՀՀ բանկային ոլորտի մասնագետների շրջանում էմպիրիկ հետազոտություն՝ բացահայտելու կորպորատիվ կառավարման զարգացման հիմնական միտումները, խնդիրները և սահմանափակումները:
- Մշակել ՀՀ բանկերի համար կորպորատիվ կառավարման արդյունավետության գնահատման համալիր մեթոդաբանություն և դրա հիման վրա ձևավորել կորպորատիվ կառավարման արդյունավետության ինդեքս:
- Մշակել տնօրենների խորհրդի արդյունավետության գնահատման մոդել և գնահատել դրա դերը բանկերի կորպորատիվ կառավարման արդյունավետության ապահովման գործում:

- Մշակել ԲՍԿ սկզբունքների ինտեգրման գնահատման և հաշվետվողականության մեթոդաբանություն:
- Գնահատել կորպորատիվ կառավարման, թվայնացման և ԲՍԿ ինտեգրման միջև առկա փոխկապակցվածությունները և դրանց ազդեցությունը բանկերի կառավարման արդյունավետության վրա:
- Մշակել բանկերի թվայնացման և կառավարման համակարգերի համաչափության գնահատման մոդել և կոնկրետ իրավիճակներում սահմանել ռազմավարական առաջնահերթություններ:
- Առաջադրել ՀՀ բանկերում կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված և գործնականում կիրառելի առաջարկություններ:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

1. Էմպիրիկ վերլուծության հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ առևտրային բանկերի կորպորատիվ կառավարման համակարգի կառուցվածքային խզումները, որոնց հիման վրա մշակվել են կառավարման համակարգի կատարելագործման գիտագործնական առաջարկություններ
2. Մշակվել է ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ և կարգավորող առանձնահատկություններին հարմարեցված կորպորատիվ կառավարման արդյունավետության համակցված ինդեքս (CGEI), որը ներառում է տնօրենների խորհրդի արդյունավետությունը, վերահսկողությունը, թափանցիկությունը, բաժնետերերի իրավունքներն ու կառավարման հավասարակշռությունը և կայուն կառավարման ինտեգրումը
3. Մշակվել է ՀՀ առևտրային բանկերի տնօրենների խորհրդի արդյունավետության գնահատման բազմաչափ մոդել, որը համադրում է կառուցվածքային, գործառնական և ռազմավարական բաղադրիչները
4. Մշակվել է ՀՀ առևտրային բանկերում ԲՍԿ սկզբունքների ինտեգրման և հաշվետվողականության գնահատման համալիր մոդել՝ նախատեսված բանկերի կատարողականի համադրելի գնահատման և համեմատական վերլուծության համար
5. Մշակվել է կորպորատիվ կառավարման և թվայնացման մակարդակների համապատասխանության երկչափ մոդել, որը հնարավորություն է տալիս բացահայտել տեխնոլոգիական զարգացման և կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների միջև անհամաչափությունները և դրանցից բխող ռիսկերը

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, արդյունքների կիրառական նշանակությունը, փորձարկումը, հրապարակումները, աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Առաջին՝ «Կորպորատիվ կառավարման տեսական և մեթոդաբանական հիմքերը. միջազգային փորձը և զարգացման արդի միտումները» գլխում ուսումնասիրվել են կորպորատիվ կառավարման էությունը և հիմնարար տեսությունները, բանկային կորպորատիվ կառավարման առանձնահատկություններն ու համակարգային ռիսկերը, ինչպես նաև ՏՀՋԿ-ի, Բազելյան կոմիտեի և միջազգային այլ մոտեցումների զարգացումները: Հեղինակը կորպորատիվ կառավարումը դիտարկում է բազմաշահառու և բազմաչափ համակարգ՝ կապելով այն ոչ միայն վերահսկողության, այլև կայունության և թվային զարգացման հետ:

Երկրորդ՝ «Կորպորատիվ կառավարման ինստիտուցիոնալ միջավայրը ՀՀ բանկային համակարգում և դրա արդյունավետության գնահատումը» գլխում ուսումնասիրվել են ՀՀ բանկային համակարգի իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը, իրականացվել է 153 ղեկավարների և մասնագետների մասնակցությամբ սոցիոլոգիական հետազոտություն, բացահայտվել են սեփականության կենտրոնացման, կառավարման մշակույթի, գործադիր մարմնի գերիշխող դիրքի և միջազգային սկզբունքների ձևական ինտեգրման խնդիրները: Նույն գլխում մշակվել և հինգ առևտրային բանկերի նկատմամբ փորձարկվել է կորպորատիվ կառավարման արդյունավետության CGEI համակցված ինդեքսը:

Երրորդ՝ «ՀՀ բանկերում կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական ուղիները և կատարելագործման մեխանիզմները» գլխում առաջարկվել են տնօրենների խորհրդի արդյունավետության գնահատման մոդել, ԲՍԿ սկզբունքների ինտեգրման և հաշվետվողականության մեթոդաբանություն, ինչպես նաև կորպորատիվ կառավարման և թվայնացման համաչափ զարգացման գնահատման երկչափ մոտեցում: Աշխատանքի վերջում ներկայացվել են հետազոտությունից բխող եզրակացություններ և գործնական առաջարկություններ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Էջ 71–73-ում հեղինակը ներկայացնում է կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Որպես ռեսպոնդենտ ընտրվել են առևտրային բանկերի կառավարման տարբեր օղակների թվով 153 ղեկավարներ և մասնագետներ: Մեր կարծիքով հավելված 1-ում և 2-ում ներկայացված հարցաշարերում ներառված հարցերի միջոցով օբյեկտիվ իրականության վերաբերյալ պատկերացում կազմելը դժվար է: Դա ներկայացնենք հետևյալ օրինակով:

   Հեղինակը նշում է, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 74.6%-ը, նշել է, որ ծանոթ է բանկի կորպորատիվ կառավարման քաղաքականությանը և կանոնակարգերին:

   Այս առումով, մեր կարծիքով, առկա է մեթոդաբանական որոշակի սահմանափակում: Հարցվողների կողմից սեփական իրազեկվածության վերաբերյալ տրված պատասխանների ճշմարտացիությունը հետազոտության շրջանակներում որևէ անկախ կամ օբյեկտիվ ստուգման չի ենթարկվել: Այս հանգամանքը հատկապես կարևոր է այն պատճառով, որ տվյալ հարցին ցածր իրազեկվածություն արտահայտող կամ «Ծանոթ չեմ» պատասխանի ընտրությունը կարող էր անուղղակիորեն ընկալվել որպես հարցվողի մասնագիտական ոչ բավարար կոմպետենտության ցուցիչ: Հետևաբար, չի կարելի բացառել ցանկալի պատասխանի կամ ինքնագնահատման կողմնակալության ազդեցությունը: Այս ենթադրության օգտին որոշակիորեն խոսում է նաև այն հանգամանքը, որ հարցմանը մասնակցած 153 անձանցից որևէ մեկը չի ընտրել «Ծանոթ չեմ» տարբերակը:

   Մեկ այլ օրինակ է Հավելված 2-ում ներառված 2-րդ հարցը, թե որքանով է վերահսկողությունն արդյունավետ:

   Մեր կարծիքով՝ նման մեթոդական մոտեցումը որոշակիորեն վիճահարույց է: Կառավարման համակարգի արդյունավետությունը չի կարող բավարար արժանահավատությամբ գնահատվել միայն հարցվողների սուբյեկտիվ ընկալումների հիման վրա, քանի որ արդյունավետությունը ենթադրում է նախապես սահմանված, չափելի և ստուգելի չափանիշների ու փաստացի արդյունքների համադրում:

2. Ատենախոսության եզրակացությունների և առաջարկությունների հատվածում հեղինակը նպատակահարմար է համարում վերանայել բանկերի վարձատրության և խրախուսման քաղաքականությունները՝ դրանք առավել սերտորեն կապելով կառավարման որակի, ռիսկերի զսպման, թվայնացման առաջընթացի և կայունության նպատակների իրականացման հետ: Միաժամանակ նշվում է, որ գործող վարձատրության համակարգերը հաճախ խրախուսում են կարճաժամկետ արդյունավետությունը: Մեր կարծիքով՝ նշված առաջարկը բավարար չափով հիմնավորված չէ ատենախոսությունում իրականացված էմպիրիկ հետազոտության արդյունքներով: Մասնավորապես, աշխատանքում առանձին ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել ՀՀ առևտրային բանկերում գործող վարձատրության և խրախուսման համակարգերը, դրանցում կիրառվող արդյունավետության ցուցանիշները և դրանց ազդեցությունը ղեկավարների վարքագծի ու որոշումների վրա:

3. Աշխատանքի տեսական և վերլուծական հատվածներում հեղինակը բազմիցս անդրադառնում է կորպորատիվ կառավարման որակի, թափանցիկության և ներդրողների վստահության միջև կապին, ինչպես նաև կորպորատիվ կառավարումը դիտարկում է ներդրումների ներգրավման հնարավոր գործոններից մեկը: Միաժամանակ առաջարկվող կորպորատիվ կառավարման արդյունավետության գնահատման համակցված ինդեքսում ներդրումային գրավչությունը կամ կապիտալի ներգրավման կարողությունը որպես առանձին արդյունքային չափանիշ չի դիտարկվում: Մեր կարծիքով՝ կորպորատիվ կառավարման արդյունավետության գնահատումը կարող էր համալրվել նաև արտաքին շուկայական արդյունքները բնութագրող ցուցանիշներով՝ մասնավորապես ներդրողների հետաքրքրվածությամբ, կապիտալի ներգրավման հնարավորություններով կամ ֆինանսավորման արժեքով: Նման մոտեցումը հնարավորություն կտար գնահատել ոչ միայն կորպորատիվ կառավարման ներքին կառուցվածքային և գործընթացային որակը, այլև դրա արտաքին տնտեսական արդյունքը և ազդեցությունը բանկի ներդրումային գրավչության վրա:

4. Ատենախոսության 152-րդ էջում նշվում է, որ վերջին տասնամյակում կանաչ պարտատոմսերի թողարկումն աճել է ավելի քան տասնապատիկ, որում մեծ դեր ունեն կորպորատիվ հատվածն ու բանկերը: Բացի այդ, աշխարհի բանկերի ճնշող մեծամասնությունը ավելացրել է իր ԲՍԿ բյուջեները՝ դրանք դիտարկելով ոչ թե որպես հայեցողական ծախս, այլ որպես ռիսկերի կառավարման հիմնական բաղադրիչ:

Նշված փաստական պնդումները պահանջում են համապատասխան աղբյուրի հղում, որը տվյալ հատվածում բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից աշխատանքում ուսումնասիրվել է ՀՀ բանկային համակարգի համար կարևոր խնդիր և ներկայացվել են կիրառական ուղղվածություն ունեցող ինքնուրույն մոտեցումներ:

Աննա Արամի Այվազյանի ատենախոսությունը կառուցվածքային առումով ամբողջական հետազոտություն է, որտեղ տեսական քննարկումը շարունակվում է ՀՀ բանկային համակարգի էմպիրիկ ուսումնասիրությամբ և ավարտվում գնահատման ու կատարելագործման գործիքների առաջարկմամբ: Հեղինակը ցուցաբերել է թեմային առնչվող գրականության, բանկային կարգավորման և կորպորատիվ կառավարման ժամանակակից խնդիրների իմացություն, ինչպես նաև փորձել է դրանք կապել Հայաստանի բանկային համակարգի ինստիտուցիոնալ առանձնահատկությունների հետ:

Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են հեղինակի գիտական հրապարակումներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ամփոփելով՝ Աննա Արամի Այվազյանի «Կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով աշխատանքը իր կառուցվածքով, հետազոտական տրամաբանությամբ և ստացված արդյունքներով կարող է գնահատվել որպես տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ավարտուն գիտական հետազոտություն, իսկ հեղինակը՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ հայցվող գիտական աստիճանին արժանի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ն. Ս. ԲԱԲԱՅԱՆ**

ՆՈՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲԱՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝

Արդշինբանկ ԲԲԸ
Անձնակազմի կառավարման վարչության պետ **Է. ԽԱՆԵՅԱՆ**

12.08. 2026թ.